ՀԿԵ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ»**

(«ՀԿԵ» ՓԲԸ)

0005 Հայաստանի Հանրապետություն,
Ք. Երևան, Տիգրան Մեծի պող.-50,
հեռ.՝ (+37410) 52-04-28, ֆաքս՝ (+37410) 57-36-30

№ Н-251 от 31.03.2021

ՀՀ Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարար
Ս. Ռ. Պապիկյանին

Ուղևորափոխադրումներից ստացված
վնասների սուբսիդավորման մասին

Հարգելի պարոն Պապիկյան,

Կոնցեսիոն պայմանագրի 2-3 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Կոնցեդենտը սուբսիդավորում /մասնակի փոխհատուցում/ է Կոնցեսիոների համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումներից ստացված տարեկան վնասը, որը չպետք է գերազանցի տարեկան կոնցեսիոն վճարի չափը: 2020թ համար սուբսիդավորման չափը կազմում է ուղևորափոխադրումներից ստացված վնասի 30%:

Կոնցեդենտի հետ համաձայնեցված ուղղություններով ուղևորափոխադրումներից 2020թ ստացվել է 3 042 557 հազար դրամի վնաս, որի 30% կազմում է 912 767 հազար դրամ:

2020թ կոնցեսիոն վճարի գումարը կազմել է 394 107 հազար դրամ:

Հաշվի առնելով, որ փոխհատուցման չափը չպետք է գերազանցի տարեկան կոնցեսիոն վճարը՝ 2020թ վճարման ենթակա վնասի մասնակի փոխհատուցման հաշվարկային չափը կկազմի 394 106 հազար դրամ:

Կից ներկայացվում է ֆինանսական հաշվետվության միջազգային ստանդարտներին համապատասխան անկախ աուդիտի կողմից հաստատված «ՀԿԵ» ՓԲԸ 2020թ. Ֆինանսական հաշվետվությունը: Ուղևորափոխադրումներից առաջացած վնասների և սուբսիդավորման հաշվարկը ընդգրկված է ֆինանսական հաշվետվության 7-րդ բաժնում (գործառնական սեգմենտներ), վնասի փոխհատուցման չափը նշված է 36-րդ էջում:

Առդիր՝
1. «ՀԿԵ» ՓԲԸ 2020թ ֆինանսական հաշվետվությունը -58 էջից,
2. 2020թ համար հաշվարկված ուղևորափոխադրումների վնասի փոխհատուցման (սուբսիդիայի) հաշիվը 394 106 հազար դրամի չափով ՝ 2 օրինակից:

Հարգանքով,

Գլխավոր տնօրեն՝ Ս. Վ. Մելնիկով

Կատ.՝ ՖՏԾ պետ Ժ.Վ.Բեկյան
Հեռ.՝ 099400323